

ԿԱՐԳ

ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

2010թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը (ՇԽ) քաղկացած է 15 անդամներից: Շահառուների խորհուրդը կոչված է ապահովելու ՀՄՀ-Հայաստան ծրագրի և շահառու խմբերի միջև շարունակական կապը:

1.2

Քաղաքացիական հասարակությունից Կառավարման խորհուրդ (ԿԽ) պատվիրակված անդամները հինգն են, ովքեր քաղաքացիական հասարակության անունից մասնակցում են ծրագրի որոշումների կայացման գործընթացում:

1.3

ՀՄՀ-Հայաստանը լայնորեն տեղեկատվություն է տարածում ՇԽ/ԿԽ առաջիկա ընտրությունների վերաբերյալ՝ հայտարարություններ տեղադրելով ՀՄՀ-Հայաստանի կայքէջում, առնվազն երկու օրաթերթերում, էլեկտրոնային նամակներ ուղարկելով քաղաքացիական հասարակության ցանցերին, ինչպես նաև լայն հանրային տարածում ունեցող լրատվամիջոցներով:

1.4

Սույն կարգի անբաժանելի մաս կազմող մասնակցության հայտի (հավելված 2, կցվում է)՝ համաձայն հետաքրքրված կազմակերպությունները կարող են ընտրությունների մասնակցել որպես ընտրող և/կամ ՇԽ/ԿԽ անդամի թեկնածու:

1.5

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ և ԿԽ անդամները ընտրվելու են և պաշտոնավարելու են ընտրվելու պահից մինչև ՀՄՀ-Հայաստան ծրագրի ավարտը՝ ներառյալ ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրի ավարտին հաջորդող ծրագրի փակման շրջանում:

1.6

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ և ԿԽ անդամները առաջնորդվում է ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրով, Կառավարման Համաձայնագրով, ներառյալ ՇԽ և ԿԽ անդամների գործունեությանը վերաբերող ստորագրված իրականացման նամակներով:

1.7

ՀՄՀ-Հայաստանը մշակում և ՀՄՀ-Հայաստան ծրագրի՝ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի (այսուհետ՝ Լիազոր ներկայացուցիչ) հաստատմանն է ներկայացնում ՇԽ և ԿԽ անդամների ընտրությունների կարգը (այսուհետ՝ Կարգ) և վերջինիս հավելվածները՝ ներառյալ մասնակցության հայտը (կցվում է, հավելված 1) և քվեաթերթիկի ձևը (կցվում է, հավելված 2):

1.8

Լիազոր ներկայացուցչի կողմից հաստատված (ՀՄԿ նախնական հաստատումից հետո) ՇԽ և ԿԽ անդամների ընտրությունների կարգը վերջնական է:

1.9

Կարգի դրույթների առնչությամբ առաջացած տարաձայնությունների դեպքում, գերակայությունը տրվում է «Հազարամյակի մարտահրավեր» Համաձայնագրի և Կառավարման Համաձայնագրի համապատասխան դրույթներին՝ ներառյալ ՇԽ և ԿԽ անդամների գործունեությանը վերաբերող ստորագրված իրականացման նամակներին:

2. Ընտրական հանձնաժողով

2.1

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը հայտարարությունների միջոցով ապահովում է քաղաքացիական հասարակության լայն իրազեկումը Ընտրական հանձնաժողովի ձևավորման համար:

2.2

Ընտրական ողջ գործընթացն իրականացվում է քաղաքացիական հասարակության կողմից ինքնաառաջադրված և/կամ առաջադրված անձանց շրջանակից ընտրված (ՀՄՀ-Հայաստանի տեխնիկական աջակցությամբ) ընտրական հանձնաժողովի կողմից՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աջակցությամբ:

2.3

Ընտրական հանձնաժողովը կազմված է առավելագույնը 15, սակայն ոչ պակաս քան 7 անդամներից: Եթե ընտրական հանձնաժողովի անդամության թեկնածուների թիվը 15-ից ավել է, ապա ընտրական հանձնաժողովի 15 անդամները կորոշվեն վիճակահանությամբ:

2.4

Ընտրական Հանձնաժողովն իր կազմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Ընտրական Հանձնաժողովի նիստերն իրավագոր են բոլոր անդամների մասնակցության դեպքում: Ընտրական հանձնաժողովի նիստերը բաց են հանրության ցանկացած դիտարկման համար: Շահագրգիռ կազմակերպությունները պատշաճ իրազեկվում են Ընտրական հանձնաժողովի նիստերի մասին:

2.5 Ընտրական Հանձնաժողովի անդամներն կարող են ինքնաբացարկ ներկայացնել մինչև ՇԽ հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

2.6

Ընտրական հանձնաժողովն իրականացնում է մասնակիցների գրանցումը ըստ ներկայացված հայտերի, կազմակերպում և իրականացնում է ՇԽ/ԿԽ անդամների ընտրության նպատակով անցկացվող քվեարկությունը և ամփոփիչ փաստաթղթերի մշակումը՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

2.7

Ընտրական հանձնաժողովը լուծարվում է ընտրությունների օրվանից մեկ ամիս անց: Եթե ընտրություններից մեկ ամիս անց առկա են վեճեր, ապա ընտրական հանձնաժողովի լիազորությունները երկարաձգվում են մինչև վեճերի լուծումը: Ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում Ընտրական հանձնաժողովն է պատասխանատու ընտրությունների առնչությամբ ծագած ցանկացած խնդիր դիտարկելու և համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: :

2.8

Ընտրական հանձնաժողովի անդամները և վերջիններիս կողմից ներկայացվող կազմակերպությունները չեն կարող առաջադրվել որպես ՇԽ/ԿԽ անդամության թեկնածուներ: Ընտրական հանձնաժողովի անդամները իրավունք ունեն հանդես գալ որպես ընտրող, եթե առաջադրվել են իրենց համապատասխան կազմակերպությունների կողմից՝ սույն կարգում նկարագրված մասնակցության իրավունքի առկայության պարագայում:

3. ՇԽ/ԿԽ Ընտրություններ

3.1 Ընտրություններին մասնակցության իրավունք

Որպես ընտրող

3.1.1

Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանում գործող բոլոր այն հասարակական կազմակերպությունները, պետական որևէ մասնակցություն չունեցող միությունները և հիմնադրամները, ջրօգտագործողների ընկերությունները և ոչ առևտրային ֆերմերային կոոպերատիվները, որոնք ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել են մինչ 2010թ. մարտի 1-ը: Կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, անկախ իրենց պետական գրանցումից, ինքնուրույն հանդես գալ չեն կարող:

3.1.2

Կազմակերպությունը ընտրություններին մասնակցում է մեկ ներկայացուցչի միջոցով:

3.1.3

Կազմակերպության լիազոր ներկայացուցիչ չեն կարող լինել (ա) ՀՀ պետական և տեղական իշխանությունների կառավարման, վարչական մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք, կամ (բ) ՀՀ պետական և համայնքային ծառայողներ, ՀՄՀ-Հայաստան ծրագրից փաստացի ֆինանսական պատվեր ունեցող ֆիզիկական անձինք և իրավաբանական անձանց սեփականատերերը կամ ղեկավար մարմինների ներկայացուցիչները:

3.1.4

Ընտրություններին մասնակցելու նպատակով շահագրգիռ անձինք պետք է ներկայացնեն մասնակցության վավերական հայտ:

3.1.5

Հայտը համարվում է վավեր, եթե լրացված է ամբողջությամբ, կնքված կազմակերպության կնիքով և ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև որպես հավելվածներ պարունակում է հետևյալ փաստաթղթերը՝ կազմակերպության գրանցման վկայականի պատճենը, կազմակերպության կողմից տրված՝ ստորագրված և կնքված լիազորագիրը (եթե ներկայացուցիչը կազմակերպության ղեկավարը չէ), ընտրողի անձնագրի պատճենը:

Որպես հավանական ընտրվող կամ ՀՄՀ-Հայաստան ՇԽ/ԿԽ անդամության թեկնածու

3.1.6

Ընտրություններին որպես թեկնածու կարող են մասնակցել այն անձինք, որոնք իրավունք ունեն հանդես գալ որպես ընտրող, կատարել են համապատասխան նշումը մասնակցության հայտի 3.1 կետում և բավարարում են սույն կարգի 3.1.7 կետի պահանջներին:

3.1.7

Անձը կարող է առաջադրվել որպես ՇԽ/ԿԽ անդամի թեկնածու, եթե ունի ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաքելությանն ու նպատակներին (օրինակ՝ ջրային ոլորտ, գյուղատնտեսության զարգացում, համայնքների զարգացում/կառավարում, բնապահպանություն, տնտեսական զարգացում, ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառու խմբերին առնչվող շահապաշտպան, գիտահետազոտական գործունեություն) առնչվող առնվազն 2 տարվա աշխատանքային և/կամ մասնագիտական փորձառություն և կցել է համառոտ կենսագրությունը:

3.2 Հայտի ներկայացման գործընթաց

3.2.1

Ընտրություններին մասնակցելու համար Շահագրգիռ անձինք մինչև **2010թ. մայիսի 7-ի ժամը 18⁰⁰-ը** պետք է ներկայացնեն մասնակցության հայտը և պահանջվող փաստաթղթերը: Փաստաթղթերը պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստան գրասենյակ Հայաստան - 0010, Երևան, Մելիք-Ադամյան փ., 2/1 հասցեով (ՇԽ օգնականին) կամ ուղարկել elections@mca.am էլ. հասցեին:

3.2.2

ՇԽ օգնականն ընդունում է ընտրության մասնակցության հայտերը և հայտի ընդունումը հաստատում է ստացականով, որում նշվում է հայտի հանձնել-ընդունելու ժամանակը: Էլեկտրոնային կամ սովորական փոստով հայտերի ստացումը եւ վավերականությունը հավաստելու համար ՇԽ օգնականն ուղարկում է համապատասխան էլեկտրոնային նամակ կամ գրություն:

Ընտրությունների մասնակցի (որպես ընտրող և ընտրվող) ներկայացրած հայտի և սույն կարգի պահանջների միջև անհամապատասխանության դեպքում, հայտատու մասնակիցը անմիջապես կտեղեկացվի անհամապատասխանության կամ թերի տեղեկատվության մասին: Ծանուցումից հետո մասնակիցության հավակնորդը հնարավորություն կունենա հինգ աշխատանքային օրվա ընթացքում լրացնել/ուղղել հայտում առկա թերությունները: Եթե տրված ժամանակահատվածում թերությունները չեն վերացվում ընտրական հանձնաժողովին բավարարող ձևով, հայտը մերժվում է ընտրական հանձնաժողովի կողմից որի մասին գրավոր ծանուցվում է անձին՝ նշելով հայտի մերժման հիմքերը:

3.2.3

Ընտրական հանձնաժողովը ստուգում և գնահատում է բոլոր ստացված հայտերը և կազմում է մասնակիցների ցուցակը՝ համաձայն ընդունված հայտերի, հայտատու անձանց կողմից ներկայացվող կազմակերպությունների անվանումների այբբենական կարգով և մինչև 2010թ. մայիսի 17-ը հրապարակում այն՝ ցանկը տեղադրելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնական վեբ կայքում. www.mca.am հասցեով:

3.3. Ընտրական գործընթաց

3.3.1

Յուրաքանչյուր մասնակից ունի մեկ քվեաթերթիկ (կցվում է, հավելված 2) ստանալու և մինչև 5 թեկնածուի օգտին քվեարկելու իրավունք: Քվեաթերթիկում ընտրողները նշումները կատարում են նախընտրելի թեկնածու(ներ)ի անունների դիմաց՝ համապատասխան վանդակ(ներ)ում X նշանով կամ ցանկացած **այլ նշումներով**: 5-ից ավելի թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկները համարվում են անվավեր:

3.3.2

Քվեաթերթիկում նշվում է թեկնածու անձի անուն-ազգանունը, վերջինիս կողմից ներկայացվող կազմակերպության անվանումը: Քվեաթերթիկում թեկնածուների անունները շարադրվում է այբբենական կարգով:

3.3.3

Քվեաթերթիկում տեղ են գտնում այն թեկնածուները, որոնք մինչև ընտրությանը նախորդող 6-րդ օրը, ինքնաբացարկ չեն հայտնել:

Ինքնաբացարկի առկայության դեպքում, համապատասխան տեղեկատվություններ են ավելացվում www.mca.am կայքի թեկնածուների բաժնում:

3.3.4

Տպված քվեաթերթիկների քանակը հավասար է գրանցված մասնակիցների քանակի 105%-ին:

3.3.5

Քվեաթերթիկները բազմացնում է ՇԽ օգնականը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակում: Քվեաթերթիկների բազմացմանը պետք է ներկա գտնվեն Ընտրական Հանձնաժողովի անդամները:

3.3.6

Քվեաթերթիկների հակառակ կողմում, քվեարկության նախորդ օրը ստորագրում են Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները:

3.3.7

Ցանկության դեպքում, թեկնածուները ընտրության նախորդ օրը, ժ.15:00-16:00-ի ընթացքում կարող են քվեաթերթիկի հակառակ երեսին զետեղել իրենց ստորագրությունները:

3.3.8

Մինչև ընտրությունները քվեաթերթիկները պահվում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի մոտ: Մինչև 2.7 կետի համաձայն Ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտն Ընտրական հանձնաժողովն է պատասխանատու քվեաթերթիկների պահպանության համար: Ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտից հետո քվեաթերթիկները կփոխանցվեն ՀՄՀ-Հայաստանին արխիվացման համար՝ համաձայն վերջինիս ներքին կանոնակարգերի:

3.3.9

Քվեաթերթիկները ՇԽ օգնականը տրամադրում է ընտրական հանձնաժողովի նախագահին, քվեարկության օրը ժամը 8:50-ին՝ քվեարկության վայրում:

3.3.10

Ընտրության մասնակիցը քվեարկության է ներկայանում անձնագրով:

3.3.11

Քվեարկությանը մասնակցում է մասնակցության հայտում նշված և ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված կազմակերպության լիազոր ներկայացուցիչը: Քվեարկությանը տվյալ կազմակերպության անունից այլ անձի մասնակցությունը չի թույլատրվում:

3.3.12

Քվեարկությունը.

- Ընտրությունն իրականացվում է 1 օրում, փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությունը անցնում է ժամը 9⁰⁰-18⁰⁰ ընթացքում:

- Ընտրությունները կանցկացվեն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից նախանշված վայրում՝ խորհրդակցելով Ընտրական հանձնաժողովի հետ:

- Ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքներն ամփոփում է ընտրության օրը ժամը 18:00-21:00-ը:

- Ընտրությունների արդյունքները ու համապատասխան արձանագրությունը հրապարակում են Ընտրական հանձնաժողովի նախագահը եւ անդամները նույն օրը մինչև ժամը 21:00-ը՝ հրավիրվող մամլո ասուլիսի ժամանակ:

- Ամփոփիչ արձանագրությունը տրամադրվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ օգնականին նույն օրը մինչև ժամը 21:30-ը: Արձանագրությունը տեղադրվում է www.mca.am կայքում, քվեարկության հաջորդող աշխատանքային օրը, մինչև ժամը 16:00-ն:

- Ընտրությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ առանց նախնական հավատարմագրման եւ առանց ընտրական գործընթացներին խանգարելու:

4. Ընտրությունների արդյունքներ

4.1

Շահառուների խորհրդում ընտրված են համարվում առավելագույն քվեներ ստացած 15 թեկնածուները:

4.2

Առավելագույն ձայներ հավաքած ՇԽ հինգ թեկնածուները ընտրվում են որպես Կառավարման խորհրդի անդամներ:

Կառավարման խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչները շարունակում են մնալ Շահառուների խորհրդում՝ որպես անդամներ:

4.3

Հավասար քվեներ հավաքած թեկնածուների առաջնահերթությունը որոշվում է տեղում՝ Ընտրական հանձնաժողովի կազմակերպած վիճակահանությամբ:

4.4

Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի (ների) լիազորությունները դադարելու դեպքում, Կառավարման խորհրդում նրա (նց) թափուր տեղը լրացնելու նպատակով թափուր տեղը լրացվում է առավելագույն ձայներ հավաքած հաջորդիվ անդամով (անդամներով):

5. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամի ետևանչը

5.1

ՇԽ անդամի ետևանչը կարող է տեղի ունենալ այդ անդամի ընտրությանը մասնակցած և քվեաթերթիկ ստացած կազմակերպությունների թվի կեսից ավելիի գրավոր ստորագրությամբ հաստատված պահանջը Շահառուների խորհրդին ներկայացվելու դեպքում՝ հետևյալ հիմքերով.

- ակնհայտ է՝ մի կողմից այդ անդամի և մյուս կողմից ՀՄՀ-Հայաստան ծրագրի և/կամ դրա որևէ բաղադրիչի միջև շահերի բախում,
- ստորագրողներն ապացույցներ ունեն, թե այդ անդամը Շահառուների խորհրդում չի ներկայացնում Ծրագրի շահառուների շահերը,
- ստորագրողները ապացույցներ ունեն, թե այդ անդամը գիտակցված խախտել է ՀՄՀ-Հայաստան Համաձայնագիրը և/կամ Կառավարման Համաձայնագիրը և/կամ այլ փաստաթղթեր, ու շարունակում է մնալ ՇԽ անդամ,
- ստորագրողներն ապացույցներ ունեն, թե այդ անդամը հիվանդության պատճառով գործունակ չէ և/կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված է ու շարունակում է մնալ ՇԽ անդամ:

**ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ
ՀԱՅՏ**

1. Տվյալներ կազմակերպության մասին

1.1	Կազմակերպության անվանումը.
1.2	Կազմակերպության իրավական տեսակը (հիմնադրամ, հասարակական կազմակերպություն, միություն, ՋՕԸ, այլ).
1.3	Կազմակերպության գրանցման ամիս-ամսաթիվ-տարեթիվը.
1.4	Կազմակերպության գտնվելու վայրը.
1.5	Կազմակերպության մասնաճյուղ(եր)ի առկայությունը, քանակը, գործունեության մարզերն ու տարածքները.
1.6	Կազմակերպության գործունեության ոլորտները (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել ևս մեկ էջ).
1.7	Կազմակերպության հասցեն, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարները, վեբ կայքը, եթե կա այդպիսին.
1.8	Կազմակերպության լիազորված անձի (նախագահ, գործադիր տնօրեն կամ այլ կարգավիճակ՝ ըստ կանոնադրական փաստաթղթերի) պաշտոնը, անուն-ազգանունը, կոնտակտային տվյալները.

2. Շիս անդամների ընտրություններում կազմակերպության ներկայացուցչի վերաբերյալ տեղեկատվություն.

2.1	Շիս անդամների ընտրություններում կազմակերպության կողմից լիազորված ներկայացուցչի անուն-ազգանունը.
2.2	Կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը.

2.3	Այլ կազմակերպություններում, քաղաքական կուսակցություններում, ընկերություններում, ընկերությունների կառավարման խորհրդներում, հասարակական շարժումներում, համալսարաններում ղեկավար կամ վարչական պաշտոններ զբաղեցնելու դեպքում, խնդրում ենք թվարկել դրանք.
2.4	Անհատական կոնտակտային տվյալները (հեռ., e-mail).

3. Ընտրություններին կազմակերպության մասնակցելու կարգավիճակը (ընդգծեք).

3.1	ա/ Միայն որպես ընտրող <input type="checkbox"/> բ/ ՇԽ/ԿԽ անդամության թեկնածու <input type="checkbox"/>
-----	--

Հայտին պարտադիր կցվող փաստաթղթեր.

1. Կազմակերպության գրանցման վկայականի պատճենը,
2. Շահառու խմբի կամ կազմակերպության կողմից տրված լիազորագիրը, եթե լիազոր ներկայացուցիչը կազմակերպության ղեկավարը չէ,
3. Կազմակերպության ներկայացուցչի անձնագրի պատճենը,
4. Կազմակերպության ներկայացուցչի համառոտ կենսագրությունը (միայն թեկնածուների համար):

Հայտը պետք է կնքվի կազմակերպության կնիքով և ստորագրվի կազմակերպության ղեկավարի կողմից:

Հետաքրքրության հայտերը հարկավոր է ներկայացնել ՀՄՀ-Հայաստան գրասենյակ ոչ ուշ քան 2010թ. մայիսի 7-ը, ժամը 18:00-ը:

Խնդրում ենք հաստատել, որ ծանոթացել եք ՇԽ/ԿԽ անդամների ընտրական կարգին և, որ հայտում ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ է և համապատասխանում է ՇԽ ընտրակարգին:

Հաստատում եմ՝ _____ (ստորագրություն):

Հավելված 2

Շահառուների խորհրդի անդամների ընտրության քվեաթերթիկ* (օրինակ)
2010թ.

N	Ազգանուն, Անուն	Կազմակերպություն	X կամ այլ նշում
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
13			
14			
15			

**Քվեաթերթիկում նշումները կատարվում են թեկնածուի և կազմակերպության անվան դիմացի վանդակում X նշանով կամ այլ նշումներով: Կարելի է քվեարկել ոչ ավել, քան 5 թեկնածուների օգտին:*